ՀԱՅ-ԲՅՈՒԶԱՆԴԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ «ՄԱՐԱՑ ԻՇԽԱՆԸ» 646 Թ.

Է. Լ. ԴԱՆԻԵԼՅԱՆ

Սեբեոսը, Կոստաս II-ի (641—668 թթ.) գահակալության հինգերորդ տարում (646 թ.) տեղի ունեցած դեպքերի մասին պատմելիս բերում է մի տեղեկություն, որը վերաբերում է բյուզանդա-մարական հարաբերություններին. նա գրում է, որ կայսրը «արձակեաց ի Հայս այր ոմն իշխան, անուն Թումա։ Սա եկեալ ոչ կամէր եղծանել ուխտն, որ ի մէջ կայսեր և իշխանին Մարաց... և խաւսեցաւ ընդ նմա ի խաղաղութիւն։ Եւ առ ի նմանէ ինչս բազումս և խոստացաւ նմա երդմամբ, զի տացէ տանել զԹէոդորոս կապանաւք ի պալատն. զի նա էր իշխան աշխարհիս Հայոց»։ Սեբեոսը այնուհետև պատմում է Թեոդորոս Ռշտունու ձերբակալման և դրան հաջորդած իրադարձությունների մասին[1]։

Լեոն ճիշտ է մեկնաբանում Սեբեոսին. նա իրավացիորեն գրում է. «Հայաստան է գալիս Թումա անունով մի պաշտոնյա, որ հանձնարարություն ուներ, ի միջի այլոց, և բանակցություն վարելու Մարաց իշխաններից մեկի հետ, որ Ատրպատականի սահմանների վրա էր ապրում»[2]։ Որոշ հետազոտողներ գտնում են, որ խոսքը արաբների հետ կնքված հաշտության մասին է[3]։ Սակայն նման կարծիքը, հակասելով աղբյուրի հաղորդմանը, հնարավորություն չի տալիս ճիշտ բացատրելու խնդրո առարկա ժամանակաշրջանի Հայաստանի քաղաքական վիճակի և բյուզանդա-մարական հարաբերությունների ուսումնասիրության հետ կապված հարցերը։

Սեբեոսը իր երկի այլ գլուխներում նույնպես պատմում է մարերի, նրանց զբաղեցրած տարածքի, ինչպես նաև նրանց իշխանի մասին։ Ակնհայտ է, որ ոչ մի հիմք չկա մարերին վերաբերող տեղեկությունները վերագրել արաբներին։ Ըստ Սեբեոսի, Ատրպատականի իշխանները VII դարի 30-ական թթ. և 40-ական թթ. սկզբին հաջորդաբար եղել են Խոռոխ Որմիզդը («իշխան Մեծ Ատրպատական աշխարհի»), նրա որդին՝ Ռոստոմը («իշխան ի կողմանս Ատրպատականի», որը գլխավորել էր «զաւր աշխարհին Մարաց») և, ըստ երևույթին, Խոռոխազատը, որին Ատրպատական նահանջած պարսկական զորքի մնացորդները Ռոստոմի սպանվելուց հետո իրենց զորավար էին ընտրել[4]։

Խալիֆայության հարվածների տակ Ատրպատականի զգալի մասը նվաճվեց մոտ 643 թ.։ Սակայն երկրի մնացած մասը, ըստ արաբ պատմիչների (Տաբարի, Իբն ալ-Ասիր), իր ամրացվածության շնորհիվ խալիֆայության տիրապետությունից դուրս էր մնացել[5]։ Ամենայն հավանականությամբ, խոսքը

---

1 Պատմութիւն Սեբէոսի, աշխատասիրությամբ Գ. Վ. Աբգարյանի. Երևան, 1979, էջ 143—144.

2 Լեո. Հայոց պատմություն. հ. II, Երևան, 1947, էջ 317։

3 Ս. Մելիք-Բախշյանը գտնում է, որ Թուման խաղաղության դաշն կնքեց Պարսկաստանում գտնվող արաբների հետ (Ս. Տ. Մելիք-Բախշյան. Հայաստանը VII—IX դարերում. Երևան, 1968, էջ 57)։ Ա. Տեր-Ղևոնդյանը կարծում է, որ Թուման դիմեց «արաբների առաջնորդին» (հավանաբար Մուավիային) և նրա հետ խաղաղություն կնքեց» (А. Н. Тер-Гевондян. Армения и Арабский халифат. Ереван, 1977, с. 31).

4 Սեբեոս, էջ 132, 137։

5 Արաբացի մատենագրեր Հայաստանի մասին, հավաքեց և թարգմանեց Ի. Խալաթյանց. Վիեննա, 1919, էջ 82։ Արաբական աղբյուրներ, Բ։ Իբն ալ-Ասիր, թարգմ. բնագրից, առաջաբան և ծանոթագրություններ Ա. Տեր-Ղևոնդյանի. Երևան, 1981, էջ 47—48։

«Մարաց ամուր աշխարհի»[6] տարածքի մասին է, որը, ըստ Սեբեոսի, դեռևս չէր նվաճվել խալիֆայության կողմից։

«Մարաց իշխանին» Սեբեոսը կրկին հիշատակում է հետագա դեպքերի կապակցությամբ։ Պատմիչը գրում է, որ «Մարաց իշխանը» ապստամբելով «ի ձեռն մի ամրացաւ, և խնդրեաց երդումն յԻսմայելացւոցն, և գնաց յանապատն ի ծառայութիւն Իսմայելացւոցն»[7]։ Իր երկի ԾԱ գլխում կրկին հիշատակելով «Մարաց ամուր աշխարհը» («Ապստամբեցան (VII դարի 50-ական թթ. առաջին կեսին—Է. Դ.) Մարք ի ծառայութենէն Իսմայելի և սպանին զիշխանն տաճկապահանջին արքային Իսմայելի, ապաւէն և թիկունս իւրեանց արարին զամուրս աշխարհին Մարաց, զանտառս խորաձորս, զվիհս, զվիմուտս, և զխորաձորս դժնդակս՝ որ զգետովն Գաղայ և զլերամբն Մարաց, զժիր և զքաջ ազգացն զաւրութիւնս, որ բնակեալ էին ի նոսա, Գելն և Դելումն»), Սեբեոսը, բնականաբար, «Մարերի իշխանին» այլևս չի հիշատակում, քանի որ վերջինս, ազատվելով արաբներից, գնաց նրանց մոտ ծառայելու, ինչպես տեղեկացրել պատմիչը ԽԲ գլխում։ Հետաքրքիր է, որ նշված հատվածում բերված պատմաաշխարհագրական տեղեկությունները որոշ չափով համապատասխանում են Անանիա Շիրակացու (610—685 թթ.) երկում պահպանված հետևյալ տեղեկություններին. «Պտղոմէոս զՄարս յելից [եւ ի հարաւոյ] Կասբից [ծովուն] ասէ լինել. եւ զոր ասեն ընդ մի իշխանութեամբ, եւ ոչ ուրեք գտանին Մարք. բայց Պտղոմէոս ասէ զաշխարհս սոցա՝ Կասբ, Քադուշ, Գելք, Դիլումք. եւ Բէ եւ Ահմատան քաղաքք են Մարաց»[8]։ Իհարկե, ըստ Պտղոմեոսի (83—161 թթ.) տվյալների, որոնք հետագայում բերում է Անանիա Շիրակացին, մարերի զբաղեցրած տարածքը շատ ավելի ընդարձակ է եղել, քան ըստ Սեբեոսի հաղորդման։ Եվ այդ բնական էր, քանի որ նրանցից յուրաքանչյուրը իր դարաշրջանին համապատասխանող տվյալներ էր հաղորդում։

Ս. Կանայանցը, հետազոտելով հայկական աղբյուրների (Կորյուն, Ագաթանգեղոս, Փավստոս Բուզանդ, Մովսես Խորենացի, Սեբեոս և այլ) հաղորդումները, եկել է այն եզրակացության, որ «Մարաց ամուր երկիրն... Ատրպատականից արևմուտք էր, Ուրմիոյ ծովից ոչ շատ հեռու, հավանորեն դեպի արևմուտք, Կորդուքից և Մահկերտունից դեպի արևելք»[9]։ Սեբեոսի մի հաղորդման («Թագաւորեցոյց Արշակ զորդի իւր զԱրշակ Փոքր կոչեցեալ ի վերայ աշխարհիս Հայոց ի Մծբին քաղաքի։ Եւ դատուցանէ նմա սահմանս զԱրուաստան առ երկրաւն Տաճկաց և առ երկրաւն Ասորւոց, և զԿապուտկեայ առ Կիւղիկեաւ, մինչև ցեզր ծովուն մեծի Արևմտից. և ցհիւսիսոյ կողմանէ ի լեառն մեծ Կովկաս, որ ձգի ընդ կողմանս արևելից և անցանէ առ սահմանաւն առ ամուր աշխարհաւն Մարաց, և հասանէ ի լեառն Ջարասպ, և անցանէ առ Նոր Շիրակ երկրաւն»)[10] հիման վրա Ս. Կանայանցը եկել է հետևյալ ուշագրավ եզրակացության. «Մարաց աշխարհը Ջարասպից էլ արևելք պիտի տարածված լիներ»[11]։ Եթե հիշենք նաև Սեբեոսի մի այլ հաղորդումը Հերակլ կայսեր (610—

---

6 Վ. Վարդանյանը գրում է, որ Թուման կարողացավ Ատրպատականի տիրոջը գրգռել Թեոդորոսի դեմ 641 թ. (տե՛ս Վ. Վարդանյան. Վասպուրականը VII դարի երկրորդ կեսին.—«Պատմա-բանասիրական հանդես», 1974, № 2, էջ 114—115)։ Նշված դեպքերը տեղի են ունեցել ոչ թե 641 թ., այլ 646 թ.։ Ուստի հետազոտողը վրիպում է աղբյուրի նշված հաղորդումները քննելիս։

7 Սեբեոս, էջ 164։ Նույն տեղում պատմիչի կողմից արված «Եւ իշխանն Մարաց, զորմէ վերագոյն ասացի...» նշումը տարակուսանք է առաջացրել հետազոտողների մոտ, այնինչ խոսքը այն նույն «Մարաց իշխանի» մասին է, որին Սեբեոսը հիշատակեց իր երկի ԽԴ գլխում Թումայի վարած բանակցությունների կապակցությամբ։

8 Ս. Տ. Երեմյան. Հայաստանը ըստ «Աշխարհացոյցի». Երևան, 1963, էջ 115։

9 Ս. Կանայանց. Անհայտ գավառներ. Էջմիածին (Վաղարշապատ), 1914, էջ 97։

10 Սեբեոս, էջ 53—54։

11 Ս. Կանայանց. Նշվ. աշխ., էջ 107։

641 թթ.) Ատրպատականով անցած և այնուհետև վերադարձին վերաբերող երթուղիների մասին («դառնայ առ ամուր աշխարհաւն Մարաց. գայ հասանէ ի Փայտակարան»[12]), ապա վերոբերյալ նյութերի հիման վրա կարելի է եզրակացնել, որ խնդրո առարկա ժամանակաշրջանում «Մարաց ամուր աշխարհը» իր մեջ ընդգրկում էր Ատրպատականի ծայրամասային՝ լեռնային, դժվարամատչելի շրջանները և ներկայացնում էր իրանական մի քանի ցեղերի միավորում:

Հայաստանի հանդեպ Բյուզանդական կայսրության վարած քաղաքականությունը իր էությամբ մնացել էր նվաճողական նաև այն ժամանակաշրջանում, երբ արևելյան մի նվաճողին՝ սասանյան Պարսկաստանին հարավից եկավ փոխարինելու մյուսը՝ Արաբական խալիֆայությունը: Սասանյանների թագավորության փլուզման պայմաններում Ատրպատականը, իսկ այնուհետև «Մարաց իշխանությունը» բավականին ինքնուրույն էին դարձել.

VII դարի 30-ական թթ. սկզբներին Սմբատ (Խոսրով-Շում) Բագրատունու որդին՝ Վարազտիրոցը, իսկ 40-ական թթ.՝ Հայոց իշխան Թեոդորոս Ռշտունին, վարելով անկախ քաղաքականություն, բախվեցին կայսրության և Ատրպատականի, այնուհետև՝ «Մարաց իշխանության» կառավարի դիմադրությանը: Վարազտիրոցին հալածեցին բյուզանդական զորավար Մժեժ Գնունին և Ատրպատականի իշխաններ Խոռոխ Որմիզդը և Ռոստոմը[13]: Կայսրության նվաճողական քաղաքականությունից էր բխում Մժեժ Գնունու համագործակցությունը ատրպատականյան իշխանների հետ և այնուհետև «զուխան, որ ի մէջ կայսեր և իշխանին Մարաց», որը Թուման «ոչ կամէր եղծանել»: Կարելի է տեսնել, որ պատկերը կրկնվում էր, միայն այն տարբերությամբ, որ Վարազտիրոցը ճարահատյալ՝ Հայաստանից հեռացավ կայսրություն[14], իսկ Թեոդորոս Ռշտունին ձերբակալվեց և տարվեց Կոստանդնուպոլիս: Կայսեր թվացող անտեղյակությունը Թեոդորոս Ռշտունու ձերբակալության կապակցությամբ կարող էր միայն խորամանկ դիվանագիտական քայլ լինել: Թեոդորոս Ռշտունուն արդարացնելը, ռոճիկ և «ընդունելութիւն յարքունուստ» կարգելը, իսկ այնուհետև նրան «զնոյն իշխանութիւն զաւրավարութեան» տալով, մեծ պատվով Հայաստան ուղարկելը[15] հետապնդում էին մի նպատակ՝ Հայաստանը պահել որպես մի կախյալ երկիր՝ կայսրության քաղաքական ոլորտում: Սակայն միջազգային փոփոխված իրավիճակում, երբ նվաճումների նախաձեռնությունը խալիֆայության կողմն էր, կայսրությունը Հայաստանում, բացի քաղաքական խառնաշփոթ ստեղծելուց, իր համար շոշափելի արդյունքի չհասավ: Թվում է, թե Բյուզանդական կայսրության և «Մարաց իշխանության» միջև եղած դաշինքը, օբյեկտիվորեն, պետք է ուղղվեր իր նվաճումներն ընդլայնող խալիֆայության դեմ, սակայն ընդհակառակը՝ այն ուղղվեց արաբական նվաճումներին դիմադրող Հայաստանի դեմ: Խալիֆայության առաջխաղացմամբ ի չիք էին դառնում բյուզանդա-մարական քաղաքական մեքենայությունները Հայաստանի հանդեպ: Մի ժամանակաշրջանում, երբ անհրաժեշտ էր համախմբել ուժերը դիմակայելու համար հարավից և արևելքից եկող նվաճումների մահացու վտանգին, Բյուզանդական կայսրությունը, դարեր շարունակ, ջանք ու եռանդ չխնայեց խափանելու Հայաստանի երկու մասերի վերամիավորման և հայկական կենտրոնացված պետության վերականգնման գործը:

---

12 Սեբեոս, էջ 125:

13 Նույն տեղում, էջ 132:

14 Նույն տեղում.

15 Նույն տեղում, էջ 145:

АРМЯНО-ВИЗАНТИЙСКИЕ ОТНОШЕНИЯ И «КНЯЗЬ МАРОВ» В 646 г.

Э. Л. ДАНИЕЛЯН

(Резюме)

Сообщения Себеоса показывают, что византийско-атрпатаканское сотрудничество, по содержанию антиармянское, начавшееся в 30-х гг. VII в., было продолжено заключением в 646 г. византийско-марского договора, в результате чего византийский чиновник Фома в том же году, по всей вероятности—с ведома императора Константа II (641—668 гг.), при активном попустительстве «князя маров» арестовал ишхана Армении Теодороса Рштуни и отправил в Константинополь. Однако через некоторое время Теодорос вернулся на родину; между тем империя стремилась удержать Армению в сфере своего влияния.

Лео правильно полагал, что «князь маров» жил «на рубежах» Атрпатакана (Атропатены). С. Т. Мелик-Бахшян, А. Н. Тер-Гевондян и другие ученые придерживаются мнения, что Фома вел переговоры с арабами. Такое мнение затушевывает правильное освещение истории взаимоотношений между Арменией, Византийской империей и Атрпатаканом, а затем княжеством маров. Известная из армянских источников «крепкая страна маров» в исследуемый период включала в себя окраинные труднодоступные, горные области Атрпатакана, населенные иранскими племенами, в том числе марами (в древности мидийцы). Большая часть Атрпатакана была завоевана арабами около 643 г. Другая часть, согласно арабским историкам (Табари, Ибн ал-Аспр), вследствие своей укрепленности осталась неподвластной халифату. Арабские историки, по всей вероятности, имели в виду территорию «крепкой страны маров», которая по Себеосу до середины VII в. не была завоевана халифатом.